ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Պատճենահանող և համակարգչային սարքավորումների պահեստամասերի և նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հուլիսի 24-ին կնքված N «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/6/4» պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1- Պայմանագրով նախատեսված ապրանքի փոխարինումն այլ բնութագիր ունեցող ապրանքով, որը գումարային արտահայտությամբ չի գերազանցում պայմանագրի գնի տասնհինգ տոկոսը:

Փոփոխության նկարագրություն- Պայմանագրով նշված ապրանքը փոխարինել այլ բնութագիր ունեցող ապրանքով:

Փոփոխության հիմնավորում- Պայմանագրի 8.5 կետ և ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

2019թ. հուլիսի 24-ին կնքված N ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/6/4 ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագրի

ք. Երևան «16» **«դեկտեմբերի» 2019թ.**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Հարությունովի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով 24.07.2019թ. կնքված N ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/6/4 ծածկագրով պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 8.5 կետը և ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված Արտաքին կոշտ սկավառակ 2.5" Portable HDD 2TB USB 3.0 Black 1 հատ ապրանքը փոխարինել այլ բնութագիր ունեցող ապրանքով, որի արժեքը չի գերազանցում պայմանագրի գնի տասնհինգ տոկոսը: Ստորև ներկայացվում է փոխարինվող ապրանքի տեխնիկական բնութագիրը:

անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ընդհանուր գինը/հազար ՀՀ դրամ
SSD կուտակիչ 512 Գբ	SSD կուտակիչ Verbatim Vi550, SATA III 6Gb/s, 512ԳԲ, 2.5", կարդալու արագությունը մինչև- 560MB/s, գրելու արագությունը մինչև - 535 MB/s, 2 մլն ժամ MTBF, անաղմուկ աշխատող, հիշողության տեսակը՝ TLS, չափսերը՝ 100,5 մմ x 69.9 մմ x 7 մմ:	հատ	32000	1	32.0

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 27.12.2019թ.: Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ապրանքների մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը (ներառյալ հավելվածը) կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերենով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	«Էմ Սի Էս Կովկաս»
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68	Հասցե՝ ք. Երևան,Կոմիտասի 32, բն. 2
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ	Բանկը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ\Հ 163518012543	Հ/Հ 193004671809
ՀՎՀՀ 02602449	ՀՎՀՀ 00052841
Գործադիր տնօրեն՝	Տնօրեն՝
_____ Ա.Աբրահամյան (ստորագրություն)	_____ Ա. Հարությունով (ստորագրություն)